«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.03.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ԱԽ-096
Խախտում՝	1. «Արարատ-Արմենիա-2» ֆուտբոլիստ Հայկ Ղուկասյանի (30441) կողմից գնդակի համար պայքարում կոպիտ խախտում կատարելը (Հավելված 1 Բ, 14-րդ կետ) 2. «Արարատ-Արմենիա-2» գլխավոր մարզիչ Տիգրան Պետրոսյանցի (4765) կողմից անվայել վարքագիծ դրսևորելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	2024-2025 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Արարատ-Արմենիա-2»-«Անդրանիկ», 15.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա-2» ֆուտբոլիստ Հայկ Ղուկասյանին (30441) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 15-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա-2» գլխավոր մարզիչ Տիգրան Պետրոսյանցին (4765) որակազրկել 5 (հինգ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 15-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 3 (երեք) խաղը, պայմանականորեն չկիրառել։ «Արարատ-Արմենիա-2» գլխավոր մարզիչ Տիգրան Պետրոսյանցի (4765) նկատմամբ փորձաշրջան սահմանել 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 15-ը ներառյալ։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։